

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՒԵՄԻ 3-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՒՆԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՕԴԱՅԻՆ ՆԱԴՈՐԴԱՎՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍ-ԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

8 սեպտեմբերի 2009թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոյթյունյանի (նախագահող), Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուկյանի, Վ. Նովիաննիսյանի (զեկուցող), Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հուլիսի 3-ին Երևանում ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության կառավարության եւ Նունասրանի Նանրապետության կառավարության միջեւ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի՝ 2009թ. օգոստոսի 22-ի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՆՆ կառավարությանն առընթեր քաղաքա-

ցիական ավիացիայի գլխավոր վարչության պեպի փեդակալ Ա. Մարությանի գրավոր բացատրությունները, հեղափոխությունը համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ .**

1. Նայասրանի Նանրապետության կառավարության եւ Նունասրանի Նանրապետության կառավարության միջեւ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագիրն ստորագրվել է 2009թ. հուլիսի 3-ին՝ Երեւանում:

Նամաձայնագրի նպատակը Պայմանավորվող կողմերի համապատասխան փարածքների միջեւ եւ փարածքներից դուրս օդային կանոնավոր հաղորդակցություն հաստատելն է՝ համաձայն «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» 1944թ. Չիկագոյի կոնվենցիայի:

2. Նամաձայնագրով Նայասրանի Նանրապետությունն սրանձնում է մի շարք պարավորություններ, այդ թվում.

- Նունասրանի Նանրապետության նշանակած ավիաընկերության կողմից միջազգային օդային կանոնավոր հաղորդակցություններ իրականացնելու համար փրամադրել հետեւյալ իրավունքները՝

ա) առանց վայրէջքի թռչել Նայասրանի Նանրապետության փարածքի վրայով,

բ) Նայասրանի Նանրապետության փարածքում ոչ առեւտրային նպատակներով կատարել կանգառներ,

գ) կատարել կանգառներ Նայասրանի Նանրապետության փարածքում համաձայնագրին կից հավելվածի Երթուղիների ցանկում սահմանված երթուղու (երթուղիների) կետերում՝ միջազգային փոխադրումներում ուղևորներ, բեռ եւ փոստ՝ առանձին կամ համակցված, օդանավ վերցնելու եւ իջեցնելու նպատակով,

- Նունասրանի Նանրապետության կողմից սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցությունների իրականացման նպատակով մեկ կամ մի քանի ավիաընկերություններ նշանակելու մասին փեդակություն սրանալուն պես՝ Նունասրանի Նանրապետության կողմից նշանակված ավիաընկերություններին փրամադրել համաձայնեցված հաղորդակցությունները շահագործելու համապատասխան թույլտվություններ՝ ընթացակարգային նվազագույն հեղափոխումներով,

- ապահովել, որպեսզի Նայասրանի Նանրապետության նշանակած ավիաընկերությունները պահպանեն Նունասրանի Նանրապետության օրենքները, կանոնակարգերը եւ ընթացակարգերը, Եվրոպական համայնքի իրավունքը, որոնք վերաբերում են միջազգային աերոնավիագացիայում ներգրավված օդանավի՝ պետության

տարածք մուտք գործելուն, այնպեղ գտնվելուն կամ այնպեղից մեկնելուն կամ նման օդանավի շահագործմանը եւ նավիգացիային,

- վավեր ճանաչել Նունաստանի Նանրապետության օրենքների եւ կանոնակարգերի, Եվրոպական համայնքի օրենքների եւ կանոնակարգերի համաձայն տրված կամ վավերացված՝ վավեր թռիչքային պիլոտաժի սերտիֆիկատները, օդանավ շահագործողի սերտիֆիկատները եւ լիցենզիաները՝ համաձայնեցված հաղորդակցությունները շահագործելու նպատակով,

- վերահաստատել, համաձայն միջազգային իրավունքով նախատեսվող իր իրավունքների եւ պարտավորությունների, որ անօրինական գործողությունների դեմ քաղաքացիական ավիացիայի անվտանգությունն ապահովելու նպատակով Պայմանավորվող կողմերի փոխադարձ պարտավորությունները կազմում են համաձայնագրի անբաժանելի մասը,

- հնարավորություն ընձեռել Նունաստանի Նանրապետության նշանակած ավիաընկերությանը Նայաստանի Նանրապետության տարածքում պահպանելու իր սեփական ներկայացուցչությունը,

- փոխադարձության սկզբունքով Նունաստանի Նանրապետության նշանակած ավիաընկերությանն ազատել ներմուծման սահմանափակումներից, մաքսատուրքերից, այլ հարկումներից, ստուգման վճարներից եւ այլ ազգային տուրքերից ու վճարումներից՝ կապված օդանավերի, վառելիքի, քայուղերի, կիրառվող տեխնիկական ծառայությունների, պահեստամասերի, ներառյալ՝ շարժիչների, օդանավի հիմնական սարքավորման, օդանավի պաշարների եւ այլ գույքի հետ, որոնք նախատեսված են օգտագործման համար կամ բացառապես օգտագործվում են համաձայնեցված օդային հաղորդակցությունները շահագործող՝ Նունաստանի Նանրապետության նշանակած ավիաընկերության օդանավի շահագործման համար,

- Նունաստանի Նանրապետության նշանակած ավիաընկերություններին տրամադրել հավասար եւ արդարացի վերաբերմունք, որպեսզի նրանք սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցությունները շահագործելիս կարողանան օգտվել հավասար հնարավորություններից,

- Նունաստանի Նանրապետության նշանակած ավիաընկերությունների կողմից համաձայնեցված հաղորդակցությունների համար գանձվող սակագները սահմանել ողջամիտ մակարդակներով՝ հաշվի առնելով բոլոր հարակից գործոնները, ներառյալ՝ շահագործման ծախսը, խելամիտ շահույթը, ծառայությունների բնույթը եւ, որպեղ դա հնարավոր է, նույն երթուղով կամ դրա մի մասով կանոնավոր փոխադրումներ իրականացնող այլ ավիաընկերությունների սակագները:

3. Համաձայնագրի անբաժանելի մասն է կազմում դրա հավելվածը, որում նախատեսված է երթուղիների ցանկը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2009 թվականի հուլիսի 3-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Հունաստանի Հանրապետության կառավարության միջեւ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

8 սեպտեմբերի 2009 թվականի
ՍԴՈ-825